

Մարզպետը քաղաքացիների ընդունելություն է կատարում համայնքներում

Արագածոտնի մարզպետարանում յուրաքանչյուր ուրբաթ օրը կազմակերպվում է քաղաքացիների ընդունելություն մարզպետ Սարգիս Սահակյանի մոտ, որին մասնակցում են բոլոր տարածաշրջանների բնակիչները: Բացի այդ, մարզպետը պարբերաբար այցելում է տարածաշրջաններ, լինում ամենահեռավոր համայնքներում եւ տեղում հանդիպում բնակիչներին: Հունիս ամսին շարունակվում են նման այցելությունները:

Հունիսի 3-ին մարզպետն այցելեց Արագածի տարածաշրջանի Նորաշեն, Գեղաձոր, Գեղադիր, Հնաբերդ, Բերքառատ, Սաղունց համայնքներ: Սրանք մարզկենտրոնից ամենահեռու գտնվող համայնքներից են, ուստի բնակիչների համար առանձնահատուկ էր մարզպետի այցը: Մարզի ղեկավարին նրանց հղած հարցադրումները բազմաթիվ էին՝ սկսած գյուղմթերքների արտադրության եւ իրացման խնդիրներից, մինչեւ անձնական ամենատարբեր հարցեր: Բարձրացված բոլոր խնդիրներին հնարավորինս տրվեցին լուծումներ, կատարվեցին պարզաբանումներ, դրանց առաջիկայում ընթացք տալու համար ուղիներ նշվեցին: Կարիքավոր ընտանիքները ներառվեցին պետպատվերով բուժօգնություն, առողջարանի ուղեգրեր տրամադրելու ծրագրերում: Ներկայացված դիմումատուներին հատկացվեց դրամական օգնություն:

Հունիսի 11-ին մարզպետի հետ հանդիպելու հնարավորություն ունեցան Ապարանի տարածաշրջանի Ձորագլուխ, Թթուջուր, Վարդենիս, Կայք, Քուչակ համայնքների բնակիչները: Այստեղ եւս քննարկվեցին և համապատասխան ընթացք ստացան գյուղական բնակավայրերի համար առանձնահատուկ հարցադրումները, տրվեց սոցիալական, բժշկական, դրամական աջակցություն:

Առաջիկայում նախատեսվում է մարզպետի այցը Թալինի տարածաշրջանի համայնքներ: